

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1839 թուականին Մոսկուայում Լազարեան ձեմարանի հրատարակութեամբ լոյս է ընծայուած զերականութեան մի նոր դասագիրք՝ «Քերականութիւն հայկական լեզուի» վերտառութեամբ, որի հեղինակն է՝ Հ. Ս. Եղիազարեան-Աղայեանցը՝:

Դասագիրքը գրուած է գրաբար լեզուով: Հեղինակը գրքի առաջաբան-երկտողում յայտարարում է, որ իր աշխատութիւնը գրելիս ինքն օգտուել է հայ «արժանաւոր լեզուագէտներին» յօրինած զերականութիւններից, ինչպէս նաեւ եւրոպական ազգերի որոշ զերականներից, սակայն դրանք լրացրել է բազմաթիւ նորանոր կանոններով եւ նիւթը շարադրել է «նորակարգ իմն ոճով»:

Իրօք, այս դասագիրքն իր բովանդակութեամբ, նիւթերի դասաւորութեամբ եւ շարադրանքի ոճով ուշադրաւ նորութիւն է հայ զերականագիտութեան պատմութեան մէջ: Այս դասագիրք-ձեռնարկը փաստօրէն գրաբարից աշխարհագրին անցնելու, երկու դարադուրս իրար միացնող մի կամուրջ է: Ձեռնարկը թէեւ գրուած է գրաբարով, օրինակները թէեւ բերուած են գրաբարի շքանի մատենագրութիւնից, այնուամենայնիւ այս դասագիրքը աշխարհագրի զերականութեան հիմնաւորման սկիզբն է ազդարարում: Աւելին, այս համեստ, բայց նորութիւններով

¹ Յովհաննէս-Սիմօն Եղիազարեան-Աղայեանց, Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկուա, 1839:

յազեցած աշխատութիւնը դարձել է աշխարհագրի գիտական զերականութեան ամրակուռ հիմնաքարը եւ ուղեցոյցը: Կարելի է եղել է այն հաղուադէպ աղբիւրներից մէկը, դուցէ եւ առաջինը, որից առատ շուր է խմել Ս. Պալասանեանը՝ զերականութեան իր դասագրքերը յօրինելիս: Ցաւօք, այս խիստ կարեւոր դասագիրքը մինչեւ այժմ վրիպել է ուսումնասիրողների ուշադրութիւնից:

Ինչպէս ասացինք, հեղինակը խոստովանում է, որ իր գիրքը շարադրելիս օգտուել է հայրենի լեզուաբանների ու զերականների արժէքաւոր երկասիրութիւններից, սակայն յակնդէ-յանուանէ եւ ոչ մի աղբիւր չի յիշատակել, որպէսզի մենք համեմատութիւններ եւ հակադրութիւններ կատարէինք: Որ իրօք Եղիազարեան-Աղայեանցն օգտուել է իրենից առաջ եղած հայ զերական հեղինակներից, կան հիմնաւոր փաստեր: Քննարկուող դասագրքի հեղինակը ձեւաբանութեան բաժնում տեսականօրէն ընդունել է 10 հոլով՝ հետեւելով Ս. Ջուղայեցուն, Պ. Դպիրին եւ Ս. Ջամչեանին: Հոլովների անուանումները Ս. Ջամչեանին, միայն այն տարբերականի, գործիականի, պարառականի եւ կոչականի տեղերը: Տես համեմատական տախտակը՝

Հոլով. անվ.	Ս. Ջուղայեցի	Պաղտ. Դպիր	Ս. Ջամչեան	Եղիազարեան-Աղայեանց
ուղղական	ուղղական	ուղղական	ուղղական	ուղղական
սեռական	սեռական	սեռական	սեռական	սեռական
տրական	տրական	գործիական	տրական	գործիական
հայցական	հայցական	արտագոյական	հայցական	պարառական
բացառական	սկզբնական	հայցական	բացառական	հայցական
պայմանական	գործիական	պատմական	պայմանական	հայցական
գործիական	կոչական	սկզբնական	գործիական	բացառական
պարառական	ներգոյական	տրական	պարառական	պայմանական
ներգոյական	պայմանական	ներգոյական	ներգոյական	ներգոյական
կոչական	արտագոյական	կոչական	կոչական	տրական

Բացի սրանից, Եղիազարեան-Աղայեանցը հոլովների գործնական կիրառութիւնը շարադրելիս ընդունում է ինը հոլով՝ շարքից հանելով կոչականը՝:

Անուան պարագայի հարցում այս հեղինակը քանակի տեսակէտից հետեւել է հին շրջանի զերականներին եւ ընդունել հինգ տեսակ՝ որակ, սեռ, թիւ, հոլով եւ հոլովադասութիւն: Մ. Ջամչեանը, Գ. Աւետիքեանը վեց տեսակ են ընդունել՝ նշուած հինգի վրայ աւելացնելով ձեւը, որը կար նաեւ հնքերի մօտ՝:

«Հին զերականը հոռմին նայելով կը շարէ հինգ պարագայ անուան, այսինքն՝ սեք կամ սեռ, տեսակք, ձեւք, թիւք, հոլովք, որու տակ կիմացուի հոլովումն, որ կըլլայ վեցերորդ պարագայ», — դրում է Գ. Աւետիքեանը՝:

Առանձին հոլովների մեկնաբանութիւնը այս զերականը վերցրել է Գ. Աւետիքեանից: Կարելի է համեմատել զննարկուող գրքի 16—19րդ եւ Գ. Աւետիքեանի 249—252 էջերը:

Այս հեղինակի «ինչ է զերականութիւն» հարցին տուած բացատրութիւնն ու սահմանումը նոյնպէս համընկնում է Մ. Ջամչեանի, Գ. Աւետիքեանի տուած բացատրութիւններին ու սահմանումներին: Բերենք օրինակներ.

1. Եղիազարեան-Աղայեանց
«Քերականութիւն է հրահանգ, որ ուսուցանէ զկանոնս ուղիղ խօսելոյ եւ դրելոյ» (էջ 9):
 2. Մ. Ջամչեան
«Քերականութիւն է ուսուցանել մարդոյ ուղիղ կարգել զխօսս» (էջ 5):
 3. Գ. Աւետիքեան
«Քերականութիւն է աս կանոնը, որ կը սորվեցնէ շիտակ ու կարգով խօսիլ՝ ձայնով ըլլայ, գրով ըլլայ» (էջ 1):
- Հոլովի ըմբռնման, քանակի հարցերը եւ մի քանի հոլովների բացատրութիւնները համընկնում են Ս. Ջուղայեցու, Պ. Դպիրի եւ Մ. Ջամչեանի բացատրութիւններին. տես՝ ա. Եղիազարեան-Աղայեանց, էջ 15.

² Տես՝ Եղիազարեան-Աղայեանց, նոյն տեղում, էջ 15—32:

³ Տես՝ Մ. Ջամչեան, Մոսկուա, 1869, էջ 94, Գ. Աւետիքեան, 1814, էջ 2:

⁴ Գ. Աւետիքեան, 1815, էջ 200:

բ. Ս. Ջուղայեցի, էջ 28. գ. Պ. Դպիր, էջ 22 եւ դ. Մ. Ջամչեան, էջ 101:

Նախադասութեան անդամները սահմանելիս քննարկուող գրքի հեղինակը օգտուել է Պաղտասար Դպիրից: Դպիրի նման նա էլ ենթական ու ստորոգեալը համարում է նախադասութեան գլխաւոր անդամները, առանց որոնց հնարաւոր չէ նախադասութիւն կազմել, իսկ միւս անդամները՝ լրացումներ, առանց որոնց հնարաւոր է նախադասութիւն կազմել, այսինքն՝ միտք արտայայտել (Եղիազարեան-Աղայեանց, էջ 64):

Դժուարանում ենք գուշակութիւններ անել օգտագործուած օտար աղբիւրների մասին. այս հարցը առանձին ուսումնասիրութեան կարիք է գգում: Մեր նպատակն է՝ զննարկուող դասագիրքը համեմատել հայերէնի նախորդ շրջանի զերականութիւնների հետ եւ ցոյց տալ դրանց միջեւ եղած նմանութիւններն ու տարբերութիւնները, ապա նշել այն նորը, որ բերել է այս հեղինակը:

Այս բոլորով հանդերձ, Եղիազարեան-Աղայեանցի վերոյիշեալ դասագրքի կառուցուածքը, նիւթերի դասաւորումն ու հերթականութիւնը, նախադասութեան անդամների եւ նախադասութեան տեսակների բացատրութիւններն ու սահմանումները որոշ չափով նոր են, իւրայատուկ եւ ուշադրութեան արժանի: Արդ՝ անդրադառնանք դրանց:

Քերականութեան դասընթացի նիւթն այս հեղինակը երեք մասի է բաժանել՝ բանադնութիւն, համաձայնութիւն եւ կէտադրութիւն: Առաջին բաժնում տարրական դադարար է տրուած հնչիւնների եւ բառի մասին, ապա մանրամասնօրէն զննութեան են առնուած ձեւաբանութիւնը, որին նա, նախորդների նման, կոչում է «մասունք բանի»⁵: Երկրորդ բաժնում, որը հեղինակն անուանել է «Համաձայնութիւն», զննութեան են առնուած շարահիւսութեան հարցերը, այն է՝ նախադասութիւն, նախադասութեան անդամները, նախադասութեան անդամների կապակցութիւնը եւ հոլովադասութիւնը, նախադասութեան տեսակները: Երրորդ բաժինը նուիրուած է կէտադրութեանը. այստեղ նշուած են դրական խօսքի մէջ կիրառուող կէտադրական նշանները եւ դրանց գործա-

⁵ Եղիազարեան-Աղայեանց, նշուած տեղում, էջ 1—11:

ծուծեան դէպքերը: Ուղղամտօրէն պէտք է ասել, որ այս դասադիրքն իր կառուցուածքով ու սկզբունքներով ակնբախ նորութիւն էր եւ թարմ հոսանք էր բերում հայ գերականադրութեան պատմութեան մէջ:

Համաձայնութիւնը, ըստ Հեղինակի, գերականութեան այն մասն է, որն զբաղւում է բառերի կապակցութեան եւ կանոնաւոր խօսք կառուցելու հարցերով: Այս բաժնի առաջին հարցը նախադասութեան սահմանումն է: Ինչպէս նախորդները, այնպէս էլ սրա դասադիրքում «բան» եւ «նախադասութիւն» հասկացութիւնները, իրաւացիօրէն չեն տարբերակուած, այլ ընդունուած են որպէս մի միասնական հասկացութիւն: «Ամենայն կատարելամիտ բան, - գրում է նա, - կազմեալ ի քանի մի բառից՝ յայտ առնէ զիմաստ կամ զգաւորութիւն ինչ»: Այսպիսով, գերականական կանոններով կապակցուած բառերը, երբ իմաստ են արտայայտում, դառնում են նախադասութիւն: Այս դէպքում Հեղինակը «բան» բառը գործածել է նեղ իմաստով «միտք» հասկացութեամբ:

Վերջապէս այս Հեղինակը նախադասութիւնը համարել է մի համառոտ խօսակցութիւն (այսինքն խօսքի ամենափոքր միաւոր - Հ. Մ.), որը բաղկացած է մի քանի բառից, որոնք իրենց մէջ մի իմաստ են պարունակում: Ահա եւ նրա սահմանումը. «Նախադասութիւն է համառոտ խօսակցութիւն՝ բաղկացեալ ի քանի մի բառից, որ պարունակէ ինքեան զմի իմաստ»:

Եթէ համեմատենք հայ անցեալի գերականների սահմանումների հետ, կը նկատենք որոշ տարբերութիւն: «Բան է կարգաւոր շարամանութիւն բառից՝ յայտնող տրամախոհութեան մտաց» (Չամչեան, Մոսկուա, 1859 թ., էջ 87): Նոյնը թրակացու եւ հայ մեկնիչների մօտ ձեւակերպուած էր այսպէս՝ «Բան է Հետեւակ բառի շարադրութիւն» (Աղոնց, «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ Հայ Մեկնութիւնք Նորին», 1915, էջ 101, 138, 202):

Ինչպէս նկատում ենք, այս Հեղինակի սահմանումը մեկնիչների եւ Չամչեանի բացատրութիւնից ինչ-որ չափով տարբերում է եւ իր ընդհանուր ոգով նման է հետագայ գերականների սահմանումներին:

Օրինակ, ինչո՞վ է տարբերում. «Մի քանի բառերից բաղկացած կամ կապակցուած այն համառոտ խօսակցութիւնը, որ իր մէջ պարունակում է որեւէ իմաստ, կոչոււմ է նախադասութիւն» սահմանումը այսօրուայ «Բառերով արտայայտուած ամփոփ միտքը կոչոււմ է նախադասութիւն» սահմանումից:

Նախորդ գերականները համաձայնութեան բաժնում խօսում էին այնքան խօսքի մասերի կապակցութեան մասին, որքան խօսքի մաս որ ճանաչել էին ձեւաբանութեան բաժնում: Եղիազարեան-Աղայեանցը այս հարցում էլ խախտել է աւանդույթը, ձեւաբանութեան բաժնում նա ճանաչել է խօսքի ութ մաս, բայց համաձայնութեան բաժնում խօսել է միայն նախադասութեան անդամների կապակցութեան ձեւերի մասին: Կարճ ասած՝ այս բաժնում նա ճանաչել է նախադասութեան վեց անդամ եւ ըստ այդմ էլ խօսել է այդ վեց անդամների համաձայնութեան, հոլովառութեան եւ շարադասութեան մասին: «Իւրաքանչիւր նախադասութիւն, - գրում է Հեղինակը, - կազմի յանդամոց, որ են վեց այսոքիկ՝ ենթակայ, բայ, խնդիր, ածական, յատկացուցիչ եւ բացայայտիչ» (էջ 64):

ԵՆԹԱԿԱՅ

Այս Հեղինակը ճիշտ է սահմանել ենթական: «Ենթակայ կոչի առարկայն, - գրում է նա, - զորմէ խօսք է ի նախադասութեան» (նոյն տեղում, էջ 65):

Երբ այս սահմանումը համեմատում ենք Ս. Պալասանեանի սահմանումի հետ, որեւէ տարբերութիւն չենք նկատում. այսպէս՝ «առարկան որի վրայ խօսուած է, կոչուած է ենթակայ» (Պալասանեան, Թիֆլիս, 1874 թ., էջ 5):

Հայ գերականներից ոմանք անցեալում այն սխալ միտքն են յայտնել, թէ Պալասանեանի գրքի կառուցուածքը ճշտու նման է ունի գերական Բուսլաբեի գրքի կառուցուածքին ու դրանից հետեւցրել են, որ իբր թէ «Պալասանեանի գերականութեան սխալ տեմն ընդօրինակուած է ունի գերականագէտ Բուսլաբեի սխալումից...»:

Այս կարծիքը սխալ է եւ անհիմն: Ինչո՞ւ ամէն մի խելօք միտք ու ձեռնարկում անպայման պէտք է համարել ուրիշներից ընդօրինակուած. չէ՞ որ մենք ունեցել ենք գերա-

6 Եղիազարեան-Աղայեանց, նշուած տեղում, էջ 64:
7 Նոյն տեղում:

կանների մի հսկայ բանակ ինչպէս Բուսլաբեից շատ առաջ, այնպէս էլ Բուսլաբեից յետոյ, որոնք, մեր կենդանի լեզուի գործուն օրինաչափութիւնները հաշուի առնելով, մըշակել են հայերէնի շարահիւսութեան օրէնքները՝ ելնելով մեր մայրենի լեզուի իւրահատկութիւններից: Մենք, իհարկէ, չենք ժխտում այն փաստը, որ շարահիւսական շատ իրողութիւններ համանման են տարբեր լեզուներում: Մենք քննարկուող ձեռնարկը համեմատեցինք Բուսլաբեի գրքի հետ եւ ո՛չ մի նմանութիւն չգտանք ո՛չ միայն նիւթի, այլեւ նրա դասադասման, շարադրանքի եւ մատուցման ձեւերի մէջ: Այսպիսով, մեր ունեցած փաստերը եւ այդ փաստերի համեմատութիւնը ցոյց են տալիս, որ Ս. Պալասանեանն օգտուել է հայ անցեալի գերականութիւններից եւ յատկապէս վերոյիշեալ Հեղինակի գրքից, յատկապէս, շարահիւսութեան բաժնից: Պալասանեանի եւ Եղիազարեան-Աղայեանցի շարահիւսական համապարզի հարցերը միմեանց այնքան մօտ են, իմաստով հարազատ եւ աղբրակից, որ այլեւս ոչ մի տարակոյս չեն թողնում դրանց հոգեհարազատութեան վերաբերեալ: Հարգարեանի գերականը համաձայնութեան եւ կապակցութեան հարցերը բաժանել է վեց դիւի եւ երկու յաւելուածի: Առաջին, երրորդ, Հինգերորդ եւ վեցերորդ գլուխները նա անուանել է «Պաշտամունք ենթակայի», «Պաշտամունք խնդրոց», «Պաշտամունք յատկացուցչի» եւ «Պաշտամունք բացայայտի»: Երկրորդ եւ չորրորդ գլուխները՝ «Կապակցութիւն բայի ընդ ենթակայի» եւ «Կապակցութիւն ածականաց ընդ դոյականի»: Յաւելուածներում նա խօսել է յարաբերական դերանուն եւ դիմորոշական (սա Հեղինակի անուանումն է - Հ. Մ.) դերանուն մասին:

Այսպիսով, այս բաժնում գերականը քննութեան է առել համաձայնութեան եւ կապակցութեան հարցերը:

«Պաշտամունք ենթակայի» ենթադրուած նա քննութեան է առել ենթակային վերաբերող հարցերը, այն է՝ ինչով կարող է արտայայտուել ենթական, ենթակայի զեղչումը, ենթակայի գործածութիւնը նախադասու-

թեան մէջ եւ նրա համաձայնութիւնը բայի հետ:

Հետաքրքիր է Եղիազարեան-Աղայեանցի այն միտքը, թէ խօսքի ինչ մասերով կարող է արտայայտուել ենթական: Քերականը որոշակի շեշտում է, որ ենթական կարող է արտայայտուել խօսքի տարբեր մասերով. «Ո՞ր բառք լինին ենթակայ» հարցին նա պատասխանում է. ա՛ գոյականները (արեգակն խաւարեցաւ), բ՛ ածականը (խտասիրտն բարեաց ոչ պատահէ), գ՛ թուականը (Հինգն ի նոցանէ յիմարք էին), դ՛ դերանունները (ես եկի), ե՛ ընդունելութիւնը (բամբասողն է սատանայ, մեռեալն կենդանացաւ), զ՛ միջարկութիւնները (երանի՛ աղբատաց, եղո՛ւկ թշուառացելոյս, վա՛շ, վա՛շ անձանց մերոց) էջ 67-68:

Օրինակներից պարզ երեւում է, որ ենթական կարող է արտայայտուել գոյականով, ածականով, թուականով, դերանունով, դերբայով, միջարկութեամբ եւ խօսքի այլ մասերով: Այս ըմբռնումը եւ դրա վերաբերեալ մեկնաբանութիւնները նոյնպէս դալիս են անցեալի հայ գերականներից: Այս սկզբունքը նոյնութեամբ անցել է Ս. Պալասանեանի դասադրքին, իսկ այնտեղից էլ մտել է արդի դպրոցական դասագրքերի մէջ:

Ենթակայի որ հոլովով դրուելու հարցում այս գերականը հետեւել է դրաբարի նախորդ շրջանի գերականներին: Ըստ սրա՝ ենթական դրուած է ուղղական հոլովով, սակայն կարող է դրուել նաեւ այլ հոլովներով (նոյն տեղում, էջ 69):

Այս գերականի դասադրում կայ նաեւ ենթակայի զեղչման հասկացութիւնը: Այս հարցը նոյնպէս նոր չէ, այլ եղել է դրաբարի գրքից բոլոր գերականութիւններում: «Գոյութիւն ենթակայի ի նախադասութեան» ենթադրուած նա խօսում է այն մասին, որ եթէ որեւէ նախադասութեան իմաստը «պարզիմաց» է, ապա ենթական կարող է զեղչուել. օրինակ՝ «Գնացէ՛ք, աշակերտեցէ՛ք զամենայն Հեթանոսս եւ մկրտեցէ՛ք զնոսս...» նախադասութեան ենթական զեղչուած է եւ մտքով Հեղուցեամբ կարող է վերականգնուել, այսինքն՝ «զուք գնացէ՛ք...» եւ այլն: Քերականը նախնիների նման «զեղչման» անուանումի փոխարէն գործ է ածել «զորութեամբ» անուանումը. «Իմաստ որեւ իցէ նախադասութեան, - գրում է նա, - եթէ է պարզ-

8 Տես՝ Ս. Պալասանեանին վերաբերող մենագրութիւնը:
9 «Պաշտամունք» անուանումը վերցուած է Մ. Ասլանեանից:

իմաց, ենթակայ նորին դնի զօրութեամբ» (նոյն տեղում, էջ 69): Այս սահմանումը նոյնպէս յենուած է նախորդ շրջանի նոյնանման սահմանումի վրայ, այսինքն՝ գալիս է հայ քերականագիտութեան պատմութիւնից:

Բ Ա Յ

Ըստ քերականի ենթական միայնակ չի կարող միտք արտայայտել, անհրաժեշտ է, որ նրա հետ լինի նաեւ դէմքով, թուով, ժամանակով եւ եղանակով արտայայտուած մի բայ, որը ցոյց տայ առարկայի (ենթակայի) կատարած գործողութիւնը, մի բան անելու, լինելու գաղափարը: Այս հեղինակի գրքում չկայ ստորոգեալ անուանումը, որը կար նոյնիսկ սկզբնական շրջանի քերականութիւններում: Ստորոգեալի փոխարէն, նախորդների նման, այս քերականը գործ է ածել «բայ» անուանումը: «Բայ, գրում է նա, - ասի բառն, որ թուով, դիմաւ, ժամանակաւ, եւ եղանակաւ ցուցանէ զգործս, զկերս, զլինելութիւնս ենթակային»¹⁰:

Բայի էութիւնը հեղինակը նոյն կերպ է բացատրել նաեւ ձեւաբանութեան բաժնում. «Բայն է երրորդ մասն բանի, - գրում է նա, - որ թուով, դիմաւ, ժամանակաւ եւ եղանակաւ ցուցանէ զգործելն, զկրելն, եւ զլինելն կենդանեաց եւ իրաց» (նոյն տեղում, էջ 41):

Չնայած քերականը ձեւաբանութեան եւ շարահիւստութեան բաժիններում գործ է ածել միեւնոյն անուանումը՝ «բայ», բայց նա իւրաքանչիւր բաժնում գրանք հասկացել է տարբեր իմաստներով ու դերով: Ըստ ձեւաբանութեան բաժնի ձեւակերպման, բայը այն խօսքի մասն է, որը ցոյց է տալիս որեւէ գործողութիւն, մի բան անելն ու լինելը, իսկ շարահիւստութեան բաժնում բայը նախադասութեան գլխաւոր անդամներից մէկն է եւ ցոյց է տալիս ենթակայի կատարած գործողութիւնը, նրա մի բան անելն ու լինելը: Քերականը այդպէս էլ համոզուած է, որովհետեւ ձեւաբանութեան մէջ «ցուցանէ զգործելն, զկրելն եւ զլինելն կենդանեաց եւ իրաց», իսկ շարահիւստութեան մէջ «ցուցանէ զգործս, զկերս, զլինելութիւնս ենթակային»¹¹:

¹⁰ Եղիազարեան-Աղայեանց, նոյն տեղում, էջ 65:
¹¹ Եղիազարեան-Աղայեանց, նոյն տեղում, էջ 41 եւ 65:

Ինչպէս նկատում ենք, այս քերականը միանգամայն ճիշտ է հասկացել ենթակայի եւ ստորոգեալի (ըստ նրա՝ բայի) դերն ու նշանակութիւնը նախադասութիւն կառուցելու, միտք արտայայտելու գործում: Ուրեմն միտք արտայայտելու համար անհրաժեշտ է մի առարկայ, որի մասին խօսուի նախադասութեան մէջ եւ դէմքով, թուով, ժամանակով ու եղանակով այդ առարկային համաձայնեցուած մի բայ, որը ցոյց տայ առարկայի կատարած գործողութիւնը, մի բան անելու, լինելու գաղափարը: Հետեւելով հայ քերականագիտութեան մշակած ընդհանուր սկզբունքին՝ քննարկուող դասագրքի հեղինակն ընդունում է, որ ենթական եւ բայը նախադասութեան գլխաւոր անդամներն են: «Յայդց անդամոց երկուքս այսօրիկ՝ ենթակայ եւ բայ... կոչին գլխաւոր անդամք նախադասութեան» (1839 թ., Մոսկուա, էջ 65):

Հետեւելով նախորդ շրջանի քերականութիւններում եղած ձեւակերպումներին՝ սա էլ այն ճիշտ կարծիքն է յայտնել, թէ առանց ենթակայի ու բայի (իմա ստորոգեալի) «է հնար կազմել զնախադասութիւն»¹²: Այս հարցի ըմբռնումը գալիս է Պ. Դպիրից (1736 թ.):

Նախադասութեան երկու գլխաւոր անդամներին՝ ենթակայի եւ բայի սահմանումները տալուց յետոյ, քերականը տալիս է գրանց համաձայնութիւնը:

Բայն ու ենթական համաձայնելու եւ դէմքով ու թուով: Պարզ, այսինքն՝ մէկ բայով արտայայտուած նախադասութեան մէջ ենթական գրուելու է ուղղական հոլովով, բարդ, այսինքն՝ մէկից աւելի բայերով արտայայտուած նախադասութիւններում ենթական կարող է գրուել նաեւ այլ հոլովներով: Բազմակի ու միաժամանակ եւ, կամ շարքով կապակցուած ենթակաների հետ բայը գրուելու է եղակի թուով: Եթէ բազում եւ բազմադիմի բայեր կան նախադասութեան մէջ, ապա բայը գրուելու է յղմակի թուով (նոյն տեղում, էջ 70): Օրինակներ.

- 1. Մովսէս եւ Եղիա մարդարէ էին:
- 2. Ելեալ ծառայքն ի ճանապարհ՝ ժողովեցին զամենսին. թողեալ Յիսուսի գթուովուրդն՝ եկն (նա) ի տուն. զհին մարդն նորոգելով՝ Փրկիչն՝ գայ ի մկրտութիւն այսօր:

¹² նոյն տեղում:

3. Խիստն եւ յանդուզն եւ հպարտն՝ ժանտ կոչի: Կամ՝ Նա եւ եղբայր նորա զալոց է:

4. Ես, դու եւ ամենայն բազմութիւնդ աշակերտեսցուք աստուածային սուրբ գրոց: Ես, դու եւ ամենայն ժողովուրդն վկայ եմք բանից եւ գործոց քոց (Մոսկուա, 1839 թ., էջ 68, 69, 70):

Քերականը նշում է նաեւ այլեւայլ մանրամասներ ու բացատրութիւններ, որոնց մենք չանդրադարձանք զիտակցաբար՝ նիւթն անտեղի չձանրաբեռնելու համար:

Բերած փաստերը՝ ինչպէս բացատրութիւններն ու սահմանումները, այնպէս էլ գրաբար օրինակ-նախադասութիւնները ցոյց են տալիս, որ այս քերականն իրօք օգտուել է իրենից առաջ եղած գրաբար քերականութիւններից:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասութեան միւս չորս անդամները՝ խնդիրը, ածականը, յատկացուցիչն ու բացայայտիչը այս հեղինակը համարել է նախադասութեան երկրորդական անդամներ, առանց որոնց հնարաւոր է կազմել որեւէ նախադասութիւն:

ա) Ածական. Լազարեանցի քերականն ածական անուանումը գործ է ածել որոշչի փոխարէն. գրաբարի գրեթէ բոլոր շրջաններում գոյութիւն ունէր նոյն մօտեցումը, այսինքն՝ շարահիւսական անուանումը դեռեւս ձեւաբանական անուանումից չէր տարբերուած, չնայած կիրառութեան իմաստով շարահիւստութեան մէջ ածական ասելով հասկանում էին որոշիչը՝ գոյականի կամ իրրեւ գոյական գործածուող բառերի որակութիւնը ցոյց տուող լրացումը:

Այս հեղինակի դասագրքում շարահիւստութեան բաժնում ածականը (իմա որոշիչը) բացատրուած է երկու տեղով:

«Ածական կոչի բառն, - գրում է նա, - որ հարցմամբս ք՞րայիսի՝ յայտ առնէ զորակութիւն առարկայի իրիք» (նոյն տեղում, էջ 65):

Ինչպէս նկատում ենք, այստեղ հեղինակը չեղտում է որոշչի մի տեսակը՝ որակութիւնը, այսինքն՝ որոշիչ համարում են ածականները: Ածականների եւ գոյականների կապակցութեան առնչութեամբ նա աւելի հանդամանօրէն է բացատրում որոշչի էութիւնը:

«Ո՞ր բառք կարեն լինել ածական» հարցին նա պատասխանում է. ա՛՛ ածական եւ թուական անուանք եւ ածական դերանուանք, բ՛՛ ընդունելութիւնք, որոնք վերջանում են օղ, եալ, լի, լոց, դ՛՛ երբեմն էլ մակրայները (զաստի կենցաղս զիչեր կոչեաց մարդարէն), դ՛՛ գոյակա՛՛ անուններն ըստ նշանակութեան միայն (ի աջ վարել զգազան ցանկութիւն), նոյն տեղում, էջ 97—98:

Ձեւաբանութեան բաժնում քերականը անուն ընդհանուր հասկացութիւնը տարբերակել է այսպէս՝ գոյական, ածական եւ թուական:

«Անուն, - գրում է նա, - ըստ որակին բաժանի ի գոյական, յածական եւ ի թուական... Գոյական անունն ցուցանէ զկոչումն եւ զինչութիւն կենդանեաց, նիւթաւոր եւ աննիւթ իրաց» (էջ 12):

Շարահիւստութեան բաժնում քերականը ածական ասելով արդէն հասկանում է առարկայի որակութիւնը ցոյց տուող երկրորդական անդամը (էջ 65): Խօսելով ածականի կապակցութեան մասին՝ քերականը նշում է, որ ածականի (այսինքն՝ որոշչի) դերով կարող են հանդէս գալ ածականը, թուականը եւ ածական դերանունները, ընդունելութիւնը, երբեմն էլ մակրայները (էջ 97—98):

Եզրակացութիւնն այն է, որ այս հեղինակը շարահիւստութեան բաժնում չնայած գործ է ածել ձեւաբանութեան մէջ գործածուած ածական անուանումը, սակայն շարահիւստութեան բաժնում գրաբարի նախորդ շրջանի քերականների նման այդ բառի տակ նա հասկացել է որոշիչը, քանի որ որոշչի դերով հանդէս են գալիս ոչ միայն ածականը, այլեւ թուականը, նոյնիսկ խօսքի այլ մասեր: Հետեւելով հայ քերականագիտութեան մշակած սկզբունքին՝ այս հեղինակը նոյնպէս պնդում է, որ նախադաս որոշիչները ո՛չ թուով եւ ո՛չ էլ հոլովով չեն համաձայնում իրենց որոշեալների (ըստ քերականի՝ գոյականների) հետ: Նախադաս ածականները (որոշիչները) կարող են համաձայնել գոյականների (որոշեալների) հետ, երբ գրանց միջեւ այլ բառեր են մտնում կամ նախադաս ածականը կամ գոյականը «զիմորոշ տառ ունին իւրեանց վերայ» (նոյն տեղում, էջ 98):

Սրանից յետոյ քերականը շարադրում է վերջադաս ածականների համաձայնութիւնը:

Նախորդների նման նա էլ նշում է, որ վերջապես որոշիչներն ընդհանրապես համաձայնում են իրենց որոշեալների հետ, սակայն այստեղ էլ կան շեղումներ եւ բացատրութիւններ (նոյն տեղում, էջ 99—100) :

ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

«Յատկացուցիչ, — գրում է նա, — ասի սեռական հոլովով եղեալ բառն, որ հարցմամբքս ո՞ր, ո՞րոյ իւրացուցանէ ինքեան գայլ բառ (Երկինք պատմեն զփառս Աստուծոյ) : Սեռական հոլովով բառն կոչի յատկացուցիչ, իսկ միւսն, որ յատկանայ նմին, կոչի յատկանալի» (նոյն տեղում, էջ 65) : Խօսքի ո՞ր մասերը կարող են յատկացուցիչ լինել, այսինքն՝ հանդէս դալ յատկացուցիչ դերով : Ըստ քերականի յատկացուցիչ կարող են լինել գոյական անունները, ածականն ու թուականը, ընդունելութիւնը, երբ «գորութեամբ ունեն զգոյականս իւրեանց», այսինքն՝ երբ դրանց մօտ հնարաւոր է մտքով վերականգնել համապատասխան գոյականները, դերանունները (ծառայ իմ ես դու, նա է եղբայր սքրա), աներեւոյթ բայերը (ժամանակ ծնանելոյ, ժամանակ մեռանելոյ) : Յատկանալի (իմա յատկացեալ) կարող են լինել բոլոր բառերը, բացի յարաբերական դերանուններից :

Հեղինակը ճիշտ է մեկնաբանում յատկացուցիչ եւ յատկացեալի կապակցութիւնը, այն է՝ յատկացուցիչը դրուելու է միայն սեռական հոլովով, իսկ յատկացեալը՝ բոլոր հոլովներով (նոյն տեղում, էջ 102—103) :

Յատկացուցիչը նախադասութեան մէջ միշտ առկայ է լինում, չի գեղչւում («զնի միշտ ներգործութեամբ»), իսկ յատկացեալը (ըստ քերականի՝ յատկանալին) շատ դէպքերում գեղչւում է եւ հասկացում կամ վերականգնւում է մտքով. եթէ նախդիր ունի, ապա այդ նախդիրը դրուում է յատկացուցիչ վրայ (տուք զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ) (նոյն տեղում, էջ 104) :

ԲԱՑԱՅՈՒՑՈՒՄ

Բացայայտիչն այս քերականի գրքում լաւ է բացատրւած : «Բացայայտիչ կոչի բառն, — գրում է նա, — որ մեկնէ զնշանակութիւն անյայտ եւ անորոշ բառի իրիք (դարձոյց Աբրահամ զեղբայր իւր՝ զԴովտ) նոյն տեղում, էջ 65 :

Աւելի որոշ եւ յստակ է այս առթիւ եղած ծանօթութիւնը, որ պէտք է սահմանում համարել. օրինակ՝ «Բառն, որ մեկին առնէ եւ պարզ գայլ անյայտ անուն, կոչի բացայայտիչ, իսկ միւսն, որ մեկնի նուաւ, կոչի բացայայտելի» (նոյն տեղում, էջ 65) : Այն բառը, որ մեկնաբանում, պարզում է որեւէ անյայտ անուն, կոչւում է բացայայտիչ, իսկ միւս բառը՝ մեկնաբանողը՝ բացայայտելի :

Բացայայտիչ եւ յատկացուցիչ տարբերութիւնը եւ առանձնայատկութիւնները ցոյց տալու համար այս քերականը դիմում է կապակցութեան, այն է՝ յատկացուցիչը հաստատապէս դրուում է սեռական հոլովով եւ չի համաձայնում իր յատկացեալի հետ, մինչդեռ բացայայտիչը համաձայնում է իր բացայայտելի հետ, ուստի երկուսն էլ կարող են դրուել բոլոր հոլովներով : Սրան զուգահեռ քերականը նշում է նաեւ նախադասութեան այդ անդամների իմաստային տարբերութիւնները, այսինքն՝ յատկացուցիչը ցոյց է տալիս թէ տուեալ առարկային ուրիշ ինչ առարկաներ, կամ մասեր են պատկանում, այն է՝ ծագումը, սերումը, վերաբերումը, իսկ բացայայտիչը ցոյց է տալիս որեւէ ընդհանուր ու անորոշ ձեւով դործածուած անուան մեկնութիւնը, պարզաբանումը : Ըստ քերականի բացայայտիչ կարող են լինել ինչպէս յատուկ, այնպէս էլ այլ գոյականները, աներեւոյթ բայերը, էական դերանունները, թուականները, ցուցական դերանունները եւ խօսքի այլեւայլ մասերը (մասունք բանինները) :

ԽՆԴԻՐ

Ինչպէս նախադասութեան քննարկուած անդամներից մի մասը, այնպէս էլ խնդիրը շատ համառօտ ու սեղմ է բնութագրուած նրա գրքում : Հետեւելով հայ քերականագիտութեան մշակած սկզբունքին՝ այս քերականը նոյնպէս խնդիրը համարել է բայական լրացում, ածականը, յատկացուցիչն ու բացայայտիչը՝ անուանական լրացումներ : Ըստ հեղինակի՝ խնդիրը՝ լրացում է նախադասութեան իմաստը : «Խնդիր կամ խնդրեալ, — գրում է նա, — կոչի բառն, որ կախեալ գոլով զբայէն՝ ըստ պահանջման նմին՝ զնի յորեւիցէ հոլով՝ առ ի լրացուցանել զիմաստ նախադասութեան» (էջ 65) :

Ինչպէս նկատում ենք, այս քերականը խնդիր հասկացութիւնը չի տարբերակել, մինչդեռ նախորդ շրջանների քերականները խնդիրը ներկայացնում էին տարբերակուած ձեւով, այն է՝ սեռի խնդիր եւ բնութեան խնդիր անուանումներով եւ արդի ըմբռնումով հասկանում էին ուղիղ եւ անուղղակի խնդիրները :

Քննարկուող ձեռնարկում խնդրի շարահիւսական ըմբռնումն աւելի մանրամասն է նկարագրուած համաձայնութեան բաժնում, «Պաշտամունք խնդրոց» ենթավերնագրի տակ : Այստեղ հեղինակը բացատրում է, թէ ո՞ր բառերն են խնդիր առնում, կամ ո՞ր բառերը կարող են խնդիր լինել : Ըստ հեղինակի խնդիր կարող են առնել բոլոր դիմաւոր բայերը, դրական եւ բացդատական ածականները, թուականները, անորոշ դերանունները, հոլովառու նախադրութիւնները : Խնդիր կարող են լինել գոյականները, ածականները, թուականները, ընդունելութիւնը եւ այլ բառեր : Սրանից յետոյ քերականը տալիս է հոլովների կիրառական նշանակութիւնը եւ մէկ առ մէկ բացատրում իւրաքանչիւր հոլովով դրուող բառի պաշտօնը նախադասութեան մէջ, այսինքն՝ ուղիղ եւ անուղղակի խնդիրները :

Այսպիսով, խնդիրները որպէս բայական լրացումներ պարզում են, թէ ենթակայի գործողութիւնը ինչ առարկայի վրայ է անցնում (անմիջաբար կամ ոչ անմիջաբար), ինչի՞ց է սկսւում, ինչ առարկայի է յանդու, մօտեցւում կամ մատուցւում, ինչ առարկայի միջոցով կամ օգնութեամբ է կատարւում եւ այլն :

ԻՅԵՆՔ ՕՐԻՆԱԿՆԵՐ :

- 1. «Ձբացառական հոլով պահանջեն այնպիսի բայք, որք հարցմամբքս՝ յուսմէ՞, ուստի՞ ցուցանեն զառարկայն կամ զտեղի, յորմէ ելանէ կրելութիւն կամ գործողութիւն ինչ» : (Տուաւ ինձ իշխանութիւն [յումմէ՞] ի հօրէ իմմէ : Լոյս ծագեցաւ [ուստի՞] յերկնից, էջ 75) :
- 2. «Գործիական հոլովով խնդիր պահանջեն բայք, — գրում է նա, — որք հարցմամբքս՝ որո՞վ, ի՞նչ ցուցանեն զմիջնորդն գործողութեան կամ կրելութեան առարկայի իրիք» (Վանեաց զնոսա [որո՞վ] զօրօքն իւրովք, էջ 82) :
- 3. «Տրական հոլովով խնդիր պահանջեն այնպիսի բայք, որք հարցմամբքս առ ո՞ր,

որ, ո՞ւմ ցուցանեն զառարկայն, յորմէ դիմէ կամ մտանէ իր ինչ» (Գնաց Յիսուս ի տուն : Առաքեաց պատուէր առ զօրս իւր, էջ 83) :

Լաւն ու դրականն այն է, որ այս հեղինակը, հետեւելով Ջուզայեցուն եւ Մ. Չամչեանին, ճանաչում է ներգոյական հոլովը, որը չկար դրաբարի քերականութիւններում եւ որը աւելացրեց Մ. Ջուզայեցին : «Ներգոյական հոլով պահանջեն այնպիսի բայք, — գրում է նա, — որք հարցմամբքս՝ յորո՞ւմ տեղւոյ եւ յոր՞մաւ ցուցանեն զմէջն տեղոյ եւ ժամանակի, յորս կատարի գործողութիւն կամ կրելութիւն առարկայի իրիք» (Մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ : Ի գիշերի եւ ի տըւրնցեան զքեզ օրհնեմք եւ զքէն գոհանամք՝ Տէր Աստուած մեր — էջ 86) :

Այս ամենից յետոյ երկու յաւելուածներում քերականը տալիս է յարաբերական եւ «դիմորոշական» դերանունների կապակցութիւնը :

Շարահիւսութեան յաջորդ բաժինը նախադասութեան տեսակների դասակարգումն է ըստ կազմութեան :

«Նախադասութիւն ըստ այլեւայլ կազմութեան, — գրում է նա, — բաժանի նախ՝ ըստ քանիւրեքեան գլխաւոր անդամոց նախադասութեան» (էջ 66) :

Ըստ նախադասութեան մէջ եղած գլխաւոր անդամների քանակի, քերականը ճանաչել է նախադասութեան երկու տեսակ՝ պարզ եւ բարդ : Նա պարզ է անուանել այն նախադասութիւնը, որը կազմուած է մէկ բայից (ստորոգրեալ) եւ մէկ ենթակայից եւ լրացումներից. Եկին թագաւորք մեր (էջ 66) :

Բարդ է անուանել այն նախադասութիւնը, որի կազմում կան մի քանի բայ կամ մի քանի ենթակայ. օրինակ՝ Պետրոս եւ Յօհաննէս ելանէին ի տաճարէն : Իսկ արին Վարդան համայն զօրօքն իւրովք՝ խաղայր գնայր յառաջ (էջ 66) :

Ինչպէս նկատում ենք, այս քերականը բազմակի ենթականերով կամ բազմակի ստորոգրեալներով միաւորեալ նախադասութիւնները նոյնպէս համարել է բարդ, որն իհարկէ ճիշտ է : Նա միաւորեալ անուանումը չի գործածել :

Ըստ քերականի բարդ նախադասութիւնները բաժանւում են երկու տեսակի՝ գլխաւոր կամ անկախ եւ կախ : Գլխաւոր կամ ան-

կախ նախադասութիւն նա համարում է բարդ համադասական նախադասութիւնը: Օրինակ. «Հայրն ջո հատուցէ զեզ յայտնապէս. մի լինիցիք որպէս կեղծաւորքն. օրհնեսցուք զՔրիստոս. փրկեա զանձինս ի փորձանաց դիւաց»:

Բարդ նախադասութեան միւս տեսակը՝ կախ նախադասութիւնը փաստորեն բարդ ստորադասական նախադասութիւնն է: «Կախ, որ ցուցանէ կախումն, - գրում է զերականը, - եւ կազմի կամ յարաբերական դերանուամբք, կամ ընդունելութեամբք, կամ շաղկապօք եւ կամ մակրայիւք ոմամբք»: օրինակ՝ Հայրն ջո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ զեզ յայտնապէս: Յորժամ յազօթս կայցէք, մի լինիցիք որպէս կեղծաւորքն: Ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ, եւ այլն:

Ինչպէս գիտենք, հայ զերականները այս հարցը նոյն կերպ էին բացատրում դեռեւս 18րդ դարում: Բարդ նախադասութիւնը մի ամբողջական ըմբռնում է, սակայն ուշ միջնադարի դարաբարի զերականները այդպիսի նախադասութեան կազմում եղած նախադասութիւններից մէկը համարել են գլխաւորը, իսկ միւսը՝ լրացնող, երկրորդական կամ կախեալ: Այս հասկացութիւնը վերոյիշեալ ձեռնարկում յստակ չի մեկնարանուել: Գըլխաւոր կամ անկախ ասելով նա հասկացել է բարդ համադասական, իսկ կախ ասելով՝ բարդ ստորադասական նախադասութիւնը:

Ըստ կապակցութեան, այս զերականի գրքում նախադասութեան յաջորդ տեսակը ներածական նախադասութիւնն է: Ինչպէս պարզուում է բացատրութիւնից, ներածականը արդի անուանումով միջանկեալ նախադասութիւնն է: «Ներածական, - գրում է նա, - որ անկանի ի մէջ խօսակցութեան՝ ի հաստատութիւն բանին»:

Միջանկեալ նախադասութեան այս մեկնարանութիւնը գալիս է Պաղտասար Դպիրից: Խղճի մտօք պիտի ասել, որ Լազարեանի զերականը ճիշտ է ըմբռնել այս կարգի նախադասութիւնների էութիւնն ու իմաստը: Իրօք, միջանկեալ նախադասութիւնները աւելորդ բան չեն, ինչպէս նշել են որոշ հայ զերականներ. դրանք մտնում են նախադասութեան կազմը՝ բուն նախադասութեան իմաստը, այլեւայլ հանգամանքները պարզաբանելու, որեւէ նրբերանգ հաղորդելու համար, ուստի սխալ են այն զերականները, որոնք կարծում են, թէ առանց գլխաւորի միտքը

աղձատելու կամ խաթարելու միջանկեալ նախադասութիւնը կարելի է դուրս դնել: Այս սահմանումը «Ներածական» որ անկանի ի մէջ խօսակցութեան՝ ի հաստատութիւն բանին» ասացոյց է նրա, որ այս զերականը միջանկեալը համարում է հիմնական նախադասութեան միտքը պարզաբանող եւ ոչ թէ աւելորդ ինչ-որ բան: Հետաքրքիր է նրա բերած օրինակը. ահա այն. «Նահապետն մեր Հայկ, որպէս պատմէ Թորենացին, յաղթեաց Բելայ»: Ս. Պալասանեանն այս հեղինակից վերցրել է միջանկեալ նախադասութեան եւ գաղափարը, եւ բացատրութիւնը, միայն թէ անբաժանելի անուանումը փոխել է միջանկեալ բառով եւ բերել է այլ օրինակներ: Այսպէս՝

«Հայկ նահապետը, - գրում է Պալասանեանը, - առում են ազգային պատմիչները, շատ որդիք ու թոռներ ունեցաւ» (1874 թ., էջ 24):

Ինչպէս Լազարեանցի հեղինակը, այնպէս էլ Ս. Պալասանեանը այս հարցում, անշուշտ, ունեցել են մի այլ սկզբնաղբիւր. դա Պաղտասար Դպիրի զերականութիւնն է:

ԿԵՏԱՂՐՈՒԹԻՒՆ

Համաձայնութեան բաժնի երրորդ հարցը, որին անդրադարձել է այս զերականը, կէտադրութիւնն է:

Հակառակ աւանդական զերականութեան դասակարգման՝ զննարկուող գրքի հեղինակը տրոհութեան եւ առոգանութեան նշանները ձուլել է միմեանց եւ անուանել «կէտադրութիւն»:

«Կէտադրութիւն է մասն զերականութեան, - գրում է նա, - որ ուսուցանէ զբառս եւ զբանս տրոհել ի միմեանց զանազան նշանազծիւք» (էջ 115):

Լազարեանցի զերականը նշում է, որ մեր լեզուի կէտադրական նշանները «բազում են», որոնցից գլխաւորներն են՝ ստորակէտը, միջակէտը, վերջակէտը, բուլբը, շեշտը, ոլորակը կամ պարոյկը, ենթամասն, փակագծերը, մակակէտը, պատիւը, երկարը, սուղը, երկորեակը եւ այլն: Կէտադրական նշանները թուարկելուց յետոյ, այս զերականը մէկ առ մէկ ցոյց է տուել, թէ կէտադրական նշանները ինչ դէպքերում են գործածուում: Նա ճիշտ է մեկնարանել ստորակէտի դերը: Ստորակէտը, ըստ նրա, դրւում է գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւնների մի-

ջեւ, նախադասութեան համասեռ անդամների միջեւ (ի մէջ միատեսակ անդամոց):

Ըստ զերականի սուղը (օ) դրւում է «ի վերայ բառից, դորս արադութեամբ պարտ է եզերել» (կոչեա զօսոսա ի կեանս ջո եւ դասեցո ընդ արզարոցն» էջ 119):

Այս զերականի կարծիքով, փակագծերի մէջ են առնուելու մէջբերումները, դրքերի վերնազրեբը, հեղինակների անունները: Մէջբերումին նա անուանում է «միջանկեալ բան» (էջ 119):

Ներածական (միջանկեալ) նախադասութիւնը այս հեղինակը միայն ստորակէտով է տրոհել, ուստի փակագծերի գործածութեան բաժնում այդ մասին որեւէ բան չի ասել:

Ինչ վերաբերում է սուղի գործածութեանը, պէտք է նկատել, որ այդ նշանը ոչ միայն այս հեղինակի ապրած ժամանակները, այլեւ դրանից էլ դեռ շատ առաջ որպէս կէտադրական նշան գործածութիւնից արդէն

հանուած էր եւ գործ էր ածուում միայն ուղղադրական նպատակներով:

Անկախ նշուած եւ դեռ չնշուած թերութիւններից, Եղիազարեան-Աղայեանցի զերականութիւնը լուրջ երեւոյթ էր դարաբարի զերականութիւններից յետոյ: Չնայած նրան, որ այս գիրքը գրուած է դարաբարով եւ հեղինակն իր մի շարք բացատրութիւններն ու սահմանումները տալիս հաւատարիմ է մընացել դարաբարի զերականների մշակած սկզբունքներին, այնուամենայնիւ այս գրքի հեղինակը կանգնել է երկու սահմանագծերի վրայ: Հրաժարուելով հնից եկող շատ կանոններից ու սահմանումներից, նա մշակել է նոր կանոններ ու սահմանումներ՝ ելնելով աշխարհաբար լեզուի փաստական գոյավիճակից ու դրանով էլ հենց հիմք է տուել Ս. Պալասանեանին՝ մշակելու աշխարհաբար լեզուի գիտական զերականութեան շատ ու շատ հարցեր:

ՄԻՆԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈՒՐ